

ՈՐՈՇՈՒՄ

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Երանոս գյուղի №1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի 2021 թվականի սեպտեմբերի 24-ին կայացած նիստի (№4 արձանագրություն)

Նիստի մասնակիցներ

Նիստին մասնակցել են կառավարման խորհրդի ինը անդամներից ութը:

Օրակարգում

1.«ՀՀ Գեղարքունիքի մարզի Երանոս գյուղի №1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին

/Զեկուցող՝ խորհրդի նախագահ՝ Ս.Բավեյան/

Ղեկավարելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին և 13-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի №319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի» 2-րդ կետի 2-րդ ենթակետի և 3-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ կետերի պահանջները՝

Խորհուրդը որոշում է՝

1.«ՀՀ Գեղարքունիքի մարզի Երանոս գյուղի №1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ կազմակերպություն) տնօրենի պաշտոնի համար 2021 թվականի հոկտեմբերի 22-ից հայտարարել մրցույթ:

2.Հաստատել տնօրենի պաշտոնի համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

3.Կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթը անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակել azdarar.am կայքում ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի №319-Ն որոշմամբ սահմանված կարգով:

4.Մրցույթին մասնակցել ցանկացողների դիմումների (փաստաթղթերի) ընդունման պատասխանատվությունը վերապահել խորհրդի անդամներ՝ Կ.Խաչատրյանին և Թ.Փինայանին:

5.Մրցույթն անցկացնել կազմակերպության շենքում, այդ նպատակի համար առանձնացված սենյակում, 2021 թվականի նոյեմբերի 25-ին ժամը 12:00-ին:

6.Հանձնարարել խորհրդի նախագահ Ս.Բավեյանին կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ հայտարարելու մասին խորհրդի սույն որոշման պատճենը և հայտարարության տեքստը մինչև 2021 թվականի սեպտեմբերի 27-ը պատշաճ կարգով և պաշտոնական գրությամբ ներկայացնել ՀՀ ԿԳՄՍ նախարարին և Գեղարքունիքի մարզպետին:

Խորհրդի նախագահ՝



Ս.Բավեյան

Խորհրդի քարտուղար՝



Կ.Խաչատրյան

Մրցույթի հայտարարություն

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Երանոս գյուղի №1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի №319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 2-րդ կետի համաձայն՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Երանոս գյուղի №1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

- 1) ՀՀ քաղաքացիությունը.
- 2) Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր).

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

- 1) Դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.
- 2) ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.
- 3) Հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.
- 4) Տվյալ հաստատության զարգացման ծրագրի պատճենը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.
- 5) Ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Երանոս գյուղի №1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում՝ 2021 թվականի հոկտեմբերի 22-ից մինչև 2021 թվականի նոյեմբերի 11-ը ներառյալ, ամեն օր ժամը 09:00 մինչև 13:00, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի նոյեմբերի 25-ին՝ ժամը 12:00-ին՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Երանոս գյուղի №1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում՝ հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Երանոս 1-ին փողոց շենք 53: Տեղեկությունների համար դիմել՝ 093644794 հեռախոսահամարով, pinachyantaguhi@gmail.com էլեկտրոնային հասցեին: